

Հաստատված է

Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի

կոլեգիայի կառավարման խորհրդի

թիվ 2 / 05. 02. 2024թ. նիստում

խորհրդի նախագահ՝  Ա. Աղոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ

ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ՇԻՐԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»

/պետական ոչ առևտրային կազմակերպություն/

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՇԻՐԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՆԵՐՔՈԼԵՋԱՅԻՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ

ԵՎ ԴՐԱՆՑ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԻ

Ք. Գյումրի

2024թ.

1. Ընդհանուր դրույթները

1.1 Կանոնակարգն իրենից ներկայացնում է «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ»ի ներքին իրավական փաստաթուղթ, որը կազմվել է համաձայն քոլեջի կանոնադրության ՀՀ կառավարության 24.08.2023թ թիվ 1449-Ն որշումով կատարվել է փոփոխություն ՀՀ կառավարության 2021թ. նոյեմբերի 04-ի թիվ 1784-Ն որոշման մեջ: Սահմանելով, որ սույն որոշման հավելվածով հաստատված կարգի 22-26-րդ կետերի կարգավորումները տարածվում են 2023-2024 ուսումնական տարվանից սկսած քոլեջ ընդունված ուսանողների վրա, իսկ նախորդ տարիներին ընդունված ուսանողների համար գործում են իրենց ընդունելության ժամանակ սահմանված պայմանները:

1.2 Կանոնակարգում եղած չափորոշիչները նախատեսվում են միայն քոլեջի ներքին օգտագործման համար:

2. Նպատակներն ու խնդիրները

Սույն կանոնակարգը հնարավորություն է տալիս ներքոլեջային կրթաթոշակներ նշանակելու ուսանողին՝ հաշվի առնելով նրա ուսման առաջադիմությունը, սոցիալական վիճակը և հասարակական ակտիվությունը:

3. Ներքոլեջային կրթաթոշակների տրամադրման պայմանները

Քոլեջն իր միջոցների հաշվին ներքոլեջային կրթաթոշակներ է սահմանում հետևյալ կարգավիճակ ունեցող անձանց՝

3.1 սոցիալապես անապահով /պետական սոցիալական ծառայությունների կողմից կիրառվող ընտանիքների ապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների/ ուսանողներին ,

3.2 20/քսան/ տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ /միաձնող/ ուսանողներին,

3.3 երեք և ավելի անչափահաս կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին ,

3.4 վճարովի ուսուցման համակարգում երկու և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին,

3.5 առաջին և երկրորդ խմբերի հաշմանդամ ծնողներ ունեցող ուսանողներին ,

3.6 երրորդ խմբի հաշմանդամություն ունեցող ուսանողներին ,

3.7 հեռավոր լեռնայի և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների երեխա ուսանողներին ,

3.8 մինչև 1/մեկ / տարեկան երեխա ունեցող ուսանողներին ,

3.9 առանձնահատուկ դեպքերում այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին,

3.10 ներքուլեջային կրթաթոշակը տրամադրվում է կրթաթոշակի տրամադրման կարգով՝ ուսանողի անվանական քարտին փոխանցման եղանակով,

3.11 ներքուլեջային կրթաթոշակը կարող է տրամադրվել՝

Ուսանողի կարգավիճակի փոփոխության ընտանեկան հանգամանքներից, վարքի փոփոխության և երրկրորդ կետով՝ սահմանված պայմանների փոփոխության հետևանքով :

4. Ներքուլեջային կրթաթոշակների նշանակման կառավարումը

4.1 Սույն կանոնակարգի ենթակետերում նշված դեպքերում ներքուլեջային կրթաթոշակներ նշանակվում է քուլեջի կուլեգիալ կառավարման խորհրդի որոշման համաձայն:

4.2 Ներքուլեջային կրթաթոշակներ նշանակվում է տարին մեկ անգամ՝ ուսումնական կամ դաստիարակչական գծով տնօրենի տեղակալների , ուսանողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա:

4.3 Ներքուլեջային կրթաթոշակներ կարող են լինել ուսանողի անունով ուղարկված իրավաբանական կամ ֆիզիկական անձանց նշանակած կրթաթոշակներից, նպաստներից և վարկերից , նվիրատվություններից և դրամաշնորհներից:

4.4 Ներքուլեջային կրթաթոշակներ նշանակվում է ուսանողական համակազմի առնվազն 10 տոկոսին՝ ուսանողի սոցիալական վիճակի համապատասխան փաստաթղթերի ներկայացման դեպքում՝ տեղակալների հիմնավորած առաջարկությունների դիմումների հիման վրա:

4.5 Ներքուլեջային կրթաթոշակներ ստացողների անվանական ցանկը հանրայնացնել լսարաններում համացանցի միջոցով՝ այն կիրառելով որպես խրախուսանք: